Հոդվածի հղումը. Խաչատրյան Ա. (2023), Աղքատության նյութական և ոչ նյութական հարթությունները Հայաստանի Հանրապետությունում, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 3(3), 69-95, DOI: 10.52174/29538114_2023.3-69
Ներկայացվել է խմբագրություն՝ 23.11.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 06.12.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 25.12.2023 թ.

ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0002-6883-455X

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս պայմաններում զարգացող և զարգացած տնտեսությամբ երկրներում օրակարգային նշանակություն ունեն աղքատության հաղթահարման կենսունակ քաղաքականության մշակումն ու հետևողական իրականացումը: Դրանք պահանջում են արդյունքների քանակական գնահատում, որը որոշիչ դերակատարություն ունի աղքատության հաղթահարման և անհավասարության կրճատմանն ուղղված քաղաքականության խորացման հնարավորությունների վերհանման, իրականությանը համարժեք ուղենիշների ճշգրտման և «հետնախորշերի» բացահայտման համար:

Հոդվածում փորձել ենք կատարել վերլուծություն՝ օգտվելով կլաստերային վերլուծության գործիքակազմից, և իրականացնել զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների դասակարգում: Վերջինս հնարավորություն է տալիս դիտարկելու տարբեր երկրներում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունների ընդհանրությունները՝ աղքատության ցուցանիշների, տնտեսական աճի, կրթության և առողջապահության վրա կատարվող ծախսերի փոխհարաբերությունների համատեքստում: Ստացված արդյունքների հիման վրա առանձնացրել ենք լավագույն, վատագույն, միջին, միջինից բարձր և ցածր արդյունք արձանագրած երկրների խմբերը:

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության տվյալների հիման վրա իրականացրել ենք նաև լոգիստիկ ռեգրեսիոն վերլուծություն և գնահատել ոչ աղքատ լինելու հավանականությունը՝ կախված տնային տնտեսության գլխավորի կրթական մակարդակից, անդամների թվից, բնակության վայրից և այլն: Վերլուծության արդյունքները գործնական կարևոր նշանակություն ունեն սոցիալական քաղաքականության վերանայման, «խոցելի կետերի» բացահայտման և առաջնահերթությունների ճշգրտման տեսանկյունից:

Հիմնաբառեր. *աղքատության մակարդակ, անհավասարություն, քվինտիլ, զբաղված աղքատ, բազմաչափ աղքատություն*
JEL: D63, I32
DOI: 10.52174/29538114_2023.3-69

Ներածություն: Աղքատության հաղթահարումը և բնակչության տարբեր խավերի նյութական ու ոչ նյութական կարիքների բավարարումը օրակարգային մարտահրավեր է զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների համար: Հետևապես՝ անհրաժեշտություն է առաջանում աղքատությունը դիտարկել ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական առումներով՝ առողջապահական, կրթական և այլ բնույթի ծառայությունների հասանելիության տեսանկյունից[1]: Այս առումով, կարևորվում է բազմաչափ աղքատության առանցքային գնահատականների վերլուծությունը և ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքների օբյեկտիվ արտացոլումը:

Արդի պայմաններում աղքատության հաղթահարման և անհավասարության կրճատման հետևողական ու նպատակային քաղաքականության իրականացումը տնտեսության զարգացման կարևորագույն գրավական է: Այս առումով, քաղաքականության օբյեկտիվ և տրամաբանական բնույթը դեռևս չի նշանակում, որ դրանք ցանկալի են երկարաժամկետ հեռանկարում տնտեսական զարգացման տեսանկյունից: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում իրականացնել արդյունքների քանակական գնահատում, որը գերակայությունների ճշգրտման, ուղենիշների հստակեցման, իրագործման արդյունավետ մեխանիզմների ընտրության և հասցեական քաղաքականության կենսագործման հիմնաքարն է: Այդ իսկ պատճառով ոչ միայն դրամական աղքատության չափումը, այլ նաև բազմաչափ աղքատության գնահատումը մշտապես եղել և շարունակում են մնալ միջազգային հեղինակավոր կառույցների հետազոտության տիրույթում՝ առանցքում պահելով աղքատության կրճատման հետևողական և կենսունակ քաղաքականության խորացման հնարավորությունների բացահայտումն ու խոչընդոտների վերհանումը: Վերոնշյալ հիմնախնդիրների շրջանակն էլ պայմանավորում է այս ուղղությամբ հետազոտության խորացման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Հետազոտության նպատակը ՀՀ-ում աղքատության վերլուծությունն է նյութական և ոչ նյութական դիտակետերից:

Գրականության ակնարկ: Տնտեսական զարգացման հարացույցի հիմքում մարդկային զարգացումն է, երբ տնտեսական ցուցանիշների բարելավումը խարսխված է լինում սոցիալական առաջընթացի վրա: Այս առումով, ներկայիս տնտեսապես առաջանցիկ երկրների զարգացման հետագծում սոցիալական լրջագույն բարեփոխումներն են[2]:

---

[1] Տե՛ս World Bank, Making Services work for poor people, World Development Report 2004, էջ 18-25, https://openknowledge.worldbank.org/entities/publication/c7755269-fa9d-5a07-9471-4ea35492b1d9

[2] Տե՛ս **Anand S., Ravallion M.,** Human Development In Poor Countries: On the Role of Private Incomes and Public Services, Journal of Economics Perspectives, Volume 7, 1993, էջ 133-137, https://pubs.aeaweb.org/doi/pdfplus/10.1257/jep.7.1.133

Աղքատության հաղթահարումը, անհավասարության կրճատումը, զբաղվածության ապահովումը տնտեսական առաջընթացի կարևորագույն նախապայմաններ են: Իր հերթին՝ տնտեսական զարգացման միջոցով պարարտ հող է ստեղծվում սոցիալական խնդիրների լուծման համար: Այս առումով, աղքատության կրճատումն այն լավագույն ուղիներից է, որով տնտեսական աճը նպաստում է մարդկային զարգացմանը: Սա պահանջում է այնպիսի տնտեսական աճ, որը բնակչությանը հնարավորություն է տալիս օգտվելու դրա «պտուղներից»[3]:

Միայն տնտեսական աճի առկայությունը դեռևս չի երաշխավորում կյանքի որակի բարելավում: Ա. Սենը բերում է հետևյալ օրինակը. չնայած Չինաստանի և Շրի Լանկայի բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտն ավելի ցածր է, քան ԱՄՆ-ում ապրող սևամորթներինը, նրանց կյանքի տևողությունն ավելի երկար է: Տնտեսագիտական լայն շրջանակներում (Գ. Մյուրդա, Ա. Սեն, Ջ. Ստիգլից)[4] տարածված է այն տեսակետը, որ տնտեսական զարգացումը չի կարող բնութագրվել միայն տնտեսական աճով[5]:

Ա. Սենը իր «Զարգացումը որպես ազատություն» գրքում տնտեսական զարգացումը դիտարկում է ոչ թե տնտեսական աճի, այլ ազատությունների և հնարավորությունների ընդլայնման տեսանկյունից, իսկ աղքատությունը՝ որպես դրանցից զրկվածություն: Նրա համոզմամբ՝ բնակչությունը պետք է ընտրություն կատարելու հնարավորություն ունենա[6]: Ա. Սենի մոտեցումը շրջադարձային էր մինչ այդ գերիշխող՝ աղքատության դրամական մոտեցման առումով: Նրա պնդմամբ՝ աղքատությունը պետք է ընկալվի բազմաչափորեն՝ առողջապահության, կրթության, քաղաքական մասնակցության և սոցիալական հնարավորությունների դիտակետերից: Ներկայումս միջազգային հեղինակավոր կառույցների կողմից կատարվող գնահատումների հիմքում այս նույն տրամաբանությունն է: Այսպես՝ Համաշխարհային բանկի կողմից մշակվել են չափումներ, որոնք գնահատում են աղքատությունը ոչ միայն դրամական եկամուտների, այլ նաև առողջապահական, կրթական և այլ ծառայությունների հասանելիության տեսանկյունից:

Զարգացման հայեցակարգում առանձնակի կարևորություն ունի նաև անհավասարության խնդիրը: Անհավասարության բարձր մակարդակ ունեցող հասարակությունում տնտեսական աճի պտուղները չեն կարող համաչափ բաշխվել հասարակության առանձին անդամների միջև: Հետևապես՝ երբ անգամ բարձր տնտեսական աճը ուղեկցվում է անհավասարության խորացմամբ, դա չի կարող հանգեցնել տնտեսական զարգացման:

---

[3] Տե՛ս **Dollar D., Kleinberg T., Kray A.,** Growth Still is Good for the Poor, էջ 2-4, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2309849

[4] Տե՛ս **Deaton A.,** Prize Lecture: Measuring and Understanding Behavior, Welfare, and Poverty, 2015, https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/2015/deaton-lecture.html

[5] Տե՛ս **Մարգարյան Ս.,** Տնտեսական և սոցիալական զարգացման փոխազդեցության հիմնախնդիրները, էջ 29-30, https://arar.sci.am/dlibra/publication/295262/edition/270967/content

[6] Տե՛ս Amartya Sen and the thousand faces of poverty, July 01, 2001, https://www.iadb.org/en/news/amartya-sen-and-thousand-faces-poverty#:~:text=According%20to%20Sen%2C%20being%20poor,social%20requirements%20of%20the%20environment.

Անհավասարության բարձր մակարդակը և՛ կարճաժամկետում, և՛ երկարաժամկետում խաթարում է մարդկային կայուն զարգացման հեռանկարներն ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: Դա թույլ չի տալիս բնակչության բոլոր խմբերին լիարժեք իրացնել իրենց կարողությունները[7]: Ուստի, զարգացումը կարելի է դիտարկել նաև որպես անհավասարության բարձր մակարդակի կրճատման, իսկ Ա. Սենի մոտեցմամբ՝ անազատությունների հաղթահարման գործընթաց:

Աղքատության նյութական և ոչ նյութական հարթությունները գտնվում են նաև հայազգի տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Այսպես՝ Ա. Քթոյանը, անդրադառնալով բնակչության խոցելի խմբերի՝ կրթական և առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություններին, նշում է, որ դիտարկվող ծառայությունները Հայաստանում սահմանափակ չափով են հասանելի բնակչության ոչ միայն ստորին, այլև միջին եկամտային խմբերի համար[8]: Կ. Հարությունյանը, ներկայացնելով բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածությունը, եզրակացնում է, որ բարձրագույն կրթությունը Հայաստանում, ըստ էության, մատչելի չէ աղքատ ընտանիքների համար, ինչը բարձրագույն կրթություն ստանալու հավասար հնարավորությունների և սոցիալական արդարության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության բացակայության հետևանք է[9]: Առանձին հետազոտությունների շրջանակներում ուսումնասիրվել են եկամուտների անհավասարության և աղքատության փոխառնչությունները Հայաստանում, ըստ որոնց՝ ՀՆԱ և արտերկրից ստացվող տրանսֆերտների աճը նպաստում է աղքատության և եկամուտների անհավասարության կրճատմանը[10]: Դիտարկվել են նաև համավարակի ազդեցությամբ պայմանավորված աղքատության նորովի դրսևորումները և հիմնախնդիրները ՀՀ-ում[11]:

Այսպիսով՝ և՛ արտասահմանցի, և՛ հայ տնտեսագետների հետազոտության դիտակետում աղքատության ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական հարթություններն են: Հետազոտության արդյունքներն առանցքային դերակատարություն ունեն ՀՀ աղքատության խորապատկերի բացահայտման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, աղքատության առավել համակողմանի ուսումնասիրման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում աղքատությունը դիտարկել ինչպես տնային տնտեսությունների մակարդակում,

---

[7] Տե՛ս **Ravallion M.,** Inequality is bad for the Poor, World Bank Policy Research Working Paper 3677, August 2005, էջ 2-7, https://deliverypdf.ssrn.com/delivery.php?ID=681105073027022001030081096118098029122047004088035085027091099031068115102116114077126045101012021097047088072096116126116013078004085038068092067023008102096027085042027076022124004102114001072115107067029086101086070065100007094100089068111086&EXT=pdf&INDEX=TRUE

[8] Տե՛ս **Քթոյան Ա.,** Աղքատության ոչ նյութական հարթությունը, 2020, էջ 63, https://asue.am/upload/files/amberd/2020.2.pdf

[9] Տե՛ս **Հարությունյան Կ.,** Բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածության առանձնահատկությունները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն», N 2, 2022, էջ 3, https://doi.org/10.46991/BYSU:G/2022.13.2.003

[10] Տե՛ս **Խառատյան Ա., Գալստյան Ա.,** Եկամուտների անհավասարության և աղքատության արդի միտումները, «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն», 2022, N3, էջ 76, https://doi.org/10.46991/BYSU:G/2022.13.3.076

[11] Տե՛ս **Թադևոսյան Ջ.,** Նոր աղքատնե՞ր 21-րդ դարում. ի՞նչ է սպասվում, https://regst.wordpress.com/2022/03/31/inch_e_spasvum/

այնպես էլ այլ երկրների հետ համեմատության համատեքստում: Այս երկու տիրույթների արդյունքների զուգակցումը առանցքային նշանակություն ունի միկրոմակարդակում առկա հիմնախնդիրներից բխող մակրոտնտեսական քաղաքականության հետնախորշերի բացահայտման և ուղենիշների հստակեցման տեսանկյունից:

Հետազոտության մեթոդաբանություն: Աղքատության գնահատումը հետազոտական լայն տիրույթ է, որի կարևորագույն բաղադրիչներից է երկրների խմբավորումն ըստ աղքատության ցուցանիշների: Ստորև փորձ է արվել իրականացնելու երկրների՝ գիտականորեն հիմնավորված դասակարգում՝ համադրելով աղքատության մակարդակի, խորության, անհավասարության, տնտեսական աճի, կրթական և առողջապահական ծախսերի ցուցանիշները: Այդ նպատակով հետազոտության շրջանակներում օգտվել ենք կլաստերային վերլուծության մեթոդական գործիքակազմից, որը հնարավորություն է տալիս առանձնացնելու երկրների համասեռ խմբեր և դրանց բնութագրիչների հիման վրա բացահայտելու կլաստերների որակական հատկանիշները: Ըստ այդմ՝ կլաստերացման աստիճանակարգային մեթոդի կիրառմամբ որոշվել է կլաստերների օպտիմալ քանակը, իսկ իտերատիվ կլաստերացման k-միջինների մեթոդի գործադրմամբ դուրս են բերվել կլաստերների վերջնական կենտրոններն ու օբյեկտների (երկրների) պատկանելությունը կլաստերին: Վերջինս որոշվում է կլաստերի վերջնական կենտրոնից օբյեկտների հեռավորության հիման վրա՝ հաշվարկելով կշռված Էվկլիդեսյան հեռավորությունը[12]:

Կլաստերացման վերոնշյալ մեթոդով աղքատության ցուցանիշների, տնտեսական աճի, առողջապահական և կրթական ծախսերի ցուցանիշների հավաքածուի հիման վրա իրականացրել ենք զարգացման տարբեր մակարդակ ունեցող շուրջ հինգ տասնյակ երկրների կլաստերացում վիճակագրական վերլուծության ծրագրային փաթեթի (Statistical analysis software package, SPSS) գործադրմամբ:

Հիմք ընդունելով Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) տվյալները՝ վերլուծության շրջանակներում նաև բինար լոջիթ մոդելով գնահատվել է ոչ աղքատ լինելու հավանականությունը՝ կախված տնային տնտեսությունների դրամական և ոչ դրամական եկամուտներից, տնային տնտեսության գլխավորի կրթական մակարդակից, տարիքից, բնակության վայրից, բնակարանային պայմաններից: Կիրառվել է Backward Wald մեթոդը: Տվյալների բազան ներառում է 5185 տնային տնտեսություն. այս դեպքում ևս գործադրվել է SPSS ծրագրային փաթեթը:

---

[12] Տե՛ս **Крыштановский А.О.,** Анализ социологических данных с помощью пакета SPSS, Учебники Высшей школы экономики, М., 2006, էջ 206-208, տե՛ս նաև **Орлова И.В.** и др., Многомерный статистический анализ в экономических задачах: Компьютерное моделирование в SPSS, Учебное пособие, М., 2009, էջ 91:

Վերլուծություն: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2022 թվականին Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 24.8% (2021 թ.՝ 26,5%), իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 1,2% (2021 թ.՝ 1,5%)[13]: Ըստ աղքատության վերին գծի (ամսական 63060 դրամ)՝ աղքատ է համարվում բնակչության 41,3%-ը: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ աղքատության ցուցանիշները կրճատվել են, բացառությամբ չափավոր աղքատության ցուցանիշի. ըստ ստորին գծի աղքատ համարվող բնակչության տեսակարար կշիռը 10,5 %-ից աճել է՝ հասնելով 11,6%-ի (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***Աղքատության մակարդակի ցուցանիշների փոփոխման միտումները, 2009–2022 թթ.***[14]

Համաշխարհային բանկի կողմից միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների դասում աղքատության միջազգային գիծը հաշվարկվում է 2017 թվականի հաշվետու տարվա գնողունակության համարժեքով՝ բնակչության մեկ շնչի հաշվով օրական 6.85 ԱՄՆ դոլար[15]: 2022 թ., ըստ այս չեմի, աղքատ եղել է Հայաստանի բնակչության 51.3 տոկոսը, որն ավելի քան երկու անգամ գերազանցում է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների միջին մակարդակը[16]:

[13] Տե՛ս Աղքատության պատկերը Հայաստանում 2010–2021 թթ., ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 34, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf: Աղքատ են համարվում նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության միջին գծից (ամսական 52883 դրամ), իսկ ծայրահեղ աղքատների դեպքում՝ աղքատության պարենային գծից (ամսական 29934 դրամ):

[14] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2010-2021 թթ., էջ 35, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf

[15] Համադրությունների միջազգային ծրագիրը հրապարակել է 2017 թ. հաշվետու տարվա գնողունակության համարժեքները: Հայաստանի համար գործակիցը կազմել է 167.312 (ԳՀ 2017):

[16] Ըստ Համաշխարհային բանկի Հայաստանի աղքատության և հավասարության համառոտ զեկույցի՝ 2022 թ. այն գնահատվում է 41,8 տոկոս, իսկ 2023 թ. կանխատեսվում է 38 տոկոս:



Գծապատկեր 2. ***Աղքատության մակարդակը ըստ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների դասում աղքատության միջազգային գծի (օրական 6.85 ԱՄՆ դոլար), տոկոսով՝ բնակչության նկատմամբ[17]***

Գծապատկեր 2-ից երևում է, որ միջինից բարձր եկամուտ ունեցող դիտարկվող երկրների շարքում Հայաստանը և Վրաստանը աչքի են ընկնում աղքատ բնակչության անհամեմատ բարձր տեսակարար կշռով: Համեմատության համար նշենք, որ Բուլղարիայում և Ռուսաստանում, վերջին տվյալներով (2020 թ.), աղքատ են համարվել բնակչության համապատասխանաբար՝ 4,5%-ը և 4,1%-ը: Այսպիսով՝ վերոնշյալ ցուցանիշները փաստում են, որ Հայաստանում յուրաքանչյուր երկրորդ բնակիչն աղքատ է:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի դեպքում բավականին բարձր է նաև օրական 6.85 ԱՄՆ դոլարի եկամուտների կամ սպառման համար հաշվարկվող աղքատության խորության ցուցանիշը, որը 2021 թվականին կազմել է 14,4 տոկոս: Այսինքն՝ աղքատությունից դուրս գալու համար Հայաստանում բնակվող աղքատին անհրաժեշտ են աղքատության միջազգային գծի 14,4 տոկոսին համարժեք ռեսուրսներ: Համեմատության համար նշենք, որ Իրանում դա կազմել է 8 տոկոս (2019 թ.), Ռուսաստանում՝ 1 տոկոս (2020 թ.), Ղազախստանում՝ 2 տոկոս (2018 թ.), Թուրքիայում՝ 4 տոկոս (2019 թ.), Բուլղարիայում՝ 2 տոկոս (2020 թ.), Արգենտինայում՝ 3 տոկոս, Դոմինիկյան Հանրապետությունում՝ 7 տոկոս[18]: Հայաստանի ցուցանիշը նկատելիորեն բարձր է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների աղքատության խորության մակարդակից (2020 թվականին՝ 8 տոկոս):

Առավել համակողմանի վերլուծություն կատարելու նպատակով հետազոտության այս հատվածում իրականացրել ենք երկրների դասակարգում ըստ աղքատության մակարդակի, խորության, անհավասարության, տնտեսական աճի, կրթական և առողջապահական ծախսերի ցուցանիշների՝ օգտվելով

[17] Տե՛ս Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/SI.POV.UMIC: Աղյուսակում ներկայացված են Հայաստանի համար ամենավերջին՝ 2022 թ. տվյալները, Բուլղարիայի, Մեքսիկայի, Ռուսաստանի, Սերբիայի ցուցանիշներն ըստ 2020 թ. տվյալների են, իսկ Թուրքիայինը՝ 2019 թ.:

[18] Տե՛ս Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/SI.POV.UMIC

կլաստերային վերլուծության գործիքակազմից: Դա հնարավորություն կտա բացահայտելու լավագույն արդյունք գրանցած երկրների քանակական բնութագրիչները, որոնք կարևոր նշանակություն ունեն աղքատության հաղթահարման կենսունակ քաղաքականության մշակման, իրագործման արդյունավետ մեխանիզմների ընտրության, գերակայությունների վերանայման, շրջադարձային կետերի և շեղումների վերհանման տեսանկյունից:

Ստորև ներկայացնենք կլաստերային վերլուծության արդյունքները: Վերլուծության մեջ ընդգրկվել է զարգացման տարբեր մակարդակ ունեցող 48 երկիր: Վերլուծության շրջանակներում կիրառվել է կլաստերացման աստիճանակարգային մեթոդը՝ դուրս բերելով կլաստերների նպատակահարմար թիվը՝ հինգը: Այս թիվը հիմք ընդունելով՝ k-միջինների մեթոդով երկրները բաժանել ենք հինգ խմբի և դրանց բնութագրիչների հիման վրա նկարագրել կլաստերները:

Վերջնական կենտրոնների աղյուսակը ցույց է տալիս կլաստերներից յուրաքանչյուրում արձանագրված միջին արժեքներն ըստ աղքատության, տնտեսական աճի, անհավասարության, առողջապահական և կրթական ծախսերի գնահատականների: Ստացված արդյունքներից բխում է, որ աղքատության ամենացածր մակարդակ ունեցող երկրներն աչքի են ընկնում անհավասարության անհամեմատ ցածր մակարդակով, ինչպես նաև առողջապահական ու կրթական ծախսերի բարձր մակարդակով: Հետևապես՝ դա կարելի է դիտարկել որպես *լավագույն,* որի բնութագրիչները կարելի է համարել թիրախային՝ մյուս չորս կլաստերների համար: Լավագույն կլաստերին առավել մոտ գտնվող երկրորդ ամենացածր արդյունք արձանագրած կլաստերը, որի կրթական և առողջապահական ծախսերի միջին գնահատականը ամենաբարձրն է, կարող ենք դիտարկել որպես *միջինից բարձր* արդյունք արձանագրած երկրների խումբ: Վերջինս լավագույն կլաստերից տարբերվում է եկամուտների անհավասարության համեմատաբար բարձր մակարդակով: Նույն տրամաբանությամբ առանձնացրել ենք *միջին և միջինից ցածր* արդյունք արձանագրած երկրների խմբերը:

Եվ, վերջապես, աղքատության, անհավասարության ցուցանիշների ամենաբարձր, միևնույն ժամանակ, առողջապահական ու կրթական ծախսերի միջին գնահատականներով ամենացածր արժեքներ արձանագրած երկրների խումբն անվանել ենք *վատագույն* (աղյուսակ 1):

Վերլուծության արդյունքների համաձայն՝ ամենամեծ թվով երկրներ ընդգրկված են վատագույն կլաստերում (19 երկիր), իսկ ամենաքիչը՝ միջինից բարձր (4 երկիր) և լավագույն (7 երկիր) կլաստերներում:

Կլաստերների կազմի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ լավագույն կլաստերում ընդգրկվել են զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Բելգիան, Ավստրիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան և այլն: Այս երկրների խմբին առավել մոտ՝ միջինից բարձր արդյունք արձանագրած երկրների խմբում տեղ են գտել սկանդինավյան երկրները:

Աղյուսակ 1

Կլաստերների նկարագիրը, 2021 թ.[19]

	Կլաստերներ				
	Լավագույն	Միջինից բարձր	Միջին	Միջինից ցածր	Վատագույն
Աղքատության մակարդակը (օրական 6.85 ԱՄՆ դոլար)	0.41	0.63	1.33	7.08	39.83
Աղքատության խորությունը	0.29	0.32	0.61	2.39	16.18
Ջինիի գործակից	28.77	32.38	31.1	37.13	36.61
Առողջապահական հանրային ծախսերի մակարդակը, ԱՄՆ դոլար	4097	5796	1849	745	163.1
Կրթության ոլորտի պետական ծախսերը, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	5.3	6.14	5.4	4.84	4.42
Տնտեսական աճի միջին մակարդակը վերջին տասը տարում	1.91	2.05	1.69	1.72	3.79

Առաջատար երկու կլաստերում հանգրվանել են աղքատության կրճատման առավել նպատակային քաղաքականություն իրականացրած և համեմատաբար բարձր արդյունքներ արձանագրած երկրները, որոնց հաջողվել է առողջապահական և կրթական ծախսերի բարձր մակարդակի պայմաններում ապահովել աղքատության ցածր մակարդակ:

Նույն տրամաբանությամբ՝ միջին կլաստերում ընդգրկվել են անհավասարության կրճատման ուղղությամբ ակտիվ քաղաքականություն նախաձեռնած, սակայն աղքատության ցուցանիշներով դեռևս ոչ գոհացուցիչ արդյունք արձանագրած երկրները: Ուստի՝ այս երկրներում շարունակվում է աղքատության կրճատմանն ուղղված քաղաքականության կենսագործումը:

Վատագույն կլաստերում են հայտնվել աղքատության համեմատաբար ցածր մակարդակ ունեցող երկրները, որտեղ աղքատության հաղթահարման և անհավասարության կրճատման քաղաքականության վերանայման անհրաժեշտություն կա: Բացասական է այն հանգամանքը, որ ԵԱՏՄ երկրներից Հայաստանը, Ղրղզստանը և Բելառուսը հայտնվել են վատագույն արդյունք արձանագրած երկրների խմբում:

Սոցիալական բևեռվածության հիմնահարցը առավել խորանում է, երբ ուսումնասիրում ենք աղքատության աշխարհագրական կառուցվածքը: Համաշխարհային բանկի գնահատումների համաձայն՝ գյուղական բնակավայրերում ապրողների շուրջ կեսը ներառված է սպառման առավել ցածր մակարդակ ունեցող խմբում (40 տոկոս), մինչդեռ քաղաքային բնակավայրում ապրողների շուրջ մեկ երրորդն է ներառված (գծապատկեր 3): Պետք է փաստել, որ այս պատկերը բնորոշ է ինչպես ԵԱՏՄ երկրներին, այնպես է ՀՀ հարևան երկրներին:

[19] Հաշվարկել է հեղինակը Համաշխարհային բանկի տվյալների բազայի հիման վրա:



Գծապատկեր 3. ***Բնակչության ստորին 40%-ը և վերին 60%-ը՝ ըստ բնակավայրերի, 2021 թ.***[20]

Ե՛վ աղքատության, և՛ ծայրահեղ աղքատության մակարդակով գյուղական բնակավայրերի ցուցանիշները նշանակալիորեն գերազանցում են քաղաքային բնակավայրերի նույնանման ցուցանիշները: Այսպես՝ 2022 թ. գյուղական բնակավայրերի աղքատության մակարդակը քաղաքային բնակավայրերի նույն ցուցանիշը գերազանցում է մոտ 7 տոկոսով՝ կազմելով 29 տոկոս: Ծայրահեղ աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում 0,5 տոկոսով գերազանցում է քաղաքային բնակավայրերի նույնանման ցուցանիշը և կազմում 1,5 տոկոս (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. ***Աղքատության ցուցանիշներն ըստ բնակավայրերի, 2022 թ.***[21]

Գյուղական բնակավայրերի աղքատության խորության և սրության ցուցանիշները ևս գերազանցում են քաղաքային բնակավայրերի նույն ցուցանիշները: Այսպես՝ 2022 թվականին գյուղական բնակավայրերի աղքատության սրության ցուցանիշը, որը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը, կազմել է 1,6 տոկոս, ինչը 0,5 տոկոսով գերազանցում է քաղաքային բնակավայրերի նույնանուն ցուցանիշը: Դա նշանակում է, որ գյուղերում առավել շատ աղքատներ են կենտրոնացած աղքատության ստորին մակարդակում, քան քաղաքներում, հետևապես՝ նրանց սպառումն էլ

[20] Տե՛ս Poverty and Inequality Platform, World Bank, https://pip.worldbank.org/country-profiles/ARM
[21] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019-2022 թթ., էջ 35, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf

ավելի հեռու է աղքատության գծից: Դա, ըստ էության, վկայում է առավել առաջնային և խոցելի խմբի նկատմամբ հասցեական սոցիալական աջակցության իրականացման հրատապության մասին[17]:

Ինչ վերաբերում է աղքատության խորության ցուցանիշին, ապա այն ցույց է տալիս, թե որքանով է աղքատների միջին եկամուտը կամ սպառումը ցածր աղքատության գծից: 2022 թվականին գյուղական բնակավայրերի ցուցանիշը կազմել է 5.6 տոկոս, որը 1,5 տոկոսով գերազանցում է քաղաքային բնակավայրերի նույնանուն ցուցանիշը: Այսինքն՝ աղքատությունից դուրս գալու համար գյուղերում բնակվող աղքատին անհրաժեշտ են աղքատության գծի 5.6 տոկոսին համարժեք ռեսուրսներ[18]: Դրանից բխում է, որ ավելի մեծ չափով պետական ռեսուրսներ կպահանջվեն գյուղական բնակավայրերում աղքատության հաղթահարման համար:

Աղքատության ծանր լծի տակ առավելապես հայտնվում են երկու չափահասից և երկու երեխաներից կազմված տնային տնտեսությունները, որոնց համար աղքատության մակարդակը 28,9 տոկոս է[19]: Այսինքն՝ հայաստանյան ընտանիքը, որը կազմված է ծնողներից և երկու երեխաներից, ավելի մեծ հավանականություն ունի հայտնվելու աղքատության մեջ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ աղքատության մակարդակի գնահատականն առավել զգայուն է երեխաների թվի նկատմամբ: Մասնավորապես՝ երեխաների թվի աճին զուգահեռ աճում է նաև աղքատության մակարդակը. մինչև 6 տարեկան երեք և ավելի երեխաների դեպքում այն հասնում է 50,4 տոկոսի (գծապատկեր 5):



Գծապատկեր 5. ***Աղքատության մակարդակն ըստ առկա երեխաների (մինչև 6 տարեկան) թվաքանակի, 2022 թ.***[20]

[17] Տե՛ս Խաչատրյան Ա., Դատապարտված աղքատության, «Ամբերդ» տեղեկագիր, 2023/3, էջ 29, DOI: 10.52174/2579-2989_2023.3-25

[18] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2008–2018 թթ., էջ 41, https://armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf , Աղքատության պատկերը Հայաստանում 2010-2021 թթ., էջ 35, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf

[19] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019-2022 թթ., էջ 39, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf

[20] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019-2022 թթ., էջ 39, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf

Տարեցտարի բնակչության տարբեր խմբերի միջև անհավասարությունը շարունակաբար խորանում է, ինչի մասին կարելի է պատկերացում կազմել՝ ուսումնասիրելով տնային տնտեսությունների սպառողական ծախսերն ըստ քվինտիլային խմբերի:



Գծապատկեր 6. ***Սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, ըստ ցուցանիշների և ըստ տարիների, միջին ամսական, ՀՀ դրամ, 2006–2022 թթ.***[21]

Կարելի է նկատել, որ սպառողական ծախսերն ըստ սպառման քվինտիլային խմբերի խիստ անհավասարաչափ են բաշխված: Եվ այդ անհավասարությունը վերջին 15 տարում աստիճանաբար խորացել է: Այսպես՝ 1–4-րդ քվինտիլային խմբերի և 5-րդ խմբի սպառողական ծախսերի միջև առկա է հսկայական տարբերություն: 2021 թ. 1–4 քվինտիլային խմբերի սպառողական ծախսերի մակարդակը չի գերազանցում 60000 դրամը, մինչդեռ 5-րդ խմբի սպառողական ծախսերի մեծությունը ավելի քան 1,5 անգամ գերազանցում է այդ մեծությունը (գծապատկեր 6): Ավելին, 5-րդ քվինտիլային խմբի սպառողական ծախսերի մեծությունը շուրջ 5 անգամ գերազանցում է 1-ին քվինտիլային խմբերի սպառողական ծախսերը:

Ուշագրավ է, որ առաջին երեք քվինտիլային խմբերի սպառողական ծախսերի մակարդակը աղքատության միջին գծից ներքև է գտնվում, իսկ չորս քվինտիլային խմբերինը՝ աղքատության վերին գծից ներքև:

Ինչ վերաբերում է ըստ դեցիլային խմբերի սպառողական ծախսերի կառուցվածքին, ապա առանձնահատկությունն այն է, որ առավել անապահով բնակչության 10 տոկոսը սպառողական ծախսերի կեսից ավելին հատկացնում է սննդամթերքին, մինչդեռ, 10-րդ դեցիլային խմբի համեմատությամբ, առավել քիչ միջոցներ է տրամադրում ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը (գծապատկեր 7):

[21] Տե՛ս ՀՀ ՎԿ տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes_25%20Households/PS-hh-1-2022.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



Գծապատկեր 7. ***Սպառողական ծախսերի կառուցվածքն ըստ սպառողական ծախսերի I և X-րդ դեցիլային խմբերի, տոկոս, 2022 թ.***[22]

Սննդամթերքի առանձին ապրանքախմբերի սպառման չափաբաժիննե-րի տեսանկյունից բևեռային դեցիլային խմբերի միջև ընդգծված տարբերակ-վածություն չկա: Այսպես՝ առավել ապահովված բնակչության 10 տոկոսը և առավել խոցելի բնակչության 10 տոկոսը գրեթե նույնչափ են սպառում, օրի-նակ՝ շաքար, կարագ, կաթնամթերք, բուսական յուղ (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. ***Սննդամթերքի սպառման չափաբաժիններն ըստ I և X-րդ դեցիլային խմբերի, կգ, 2022 թ.***[23]

[22] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստան, տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը և հիմնական սննդամթերքի սպառումը, էջ 87, https://armstat.am/file/article/poverty_2023_a_3.pdf

[23] Տե՛ս նույն տեղը, էջ 89, https://armstat.am/file/article/poverty_2023_a_3.pdf

Բնակչության տարբեր խմբերի միջև խորացող ճեղքվածքի մասին է վկայում դրամական եկամուտների բաշխումն ըստ դեցիլային խմբերի: Ըստ գծապատկեր 9-ի՝ վերջին 15 տարիներին 10-րդ և 9-րդ դեցիլային խմբերի միջև շարունակաբար խորացել է խզումը: 2022 թ. ամենաբարձր եկամուտ ունեցող 10 տոկոս բնակչության միջին ամսական եկամտները կրկնակի գերազանցում են տնային տնտեսությունների 80 տոկոսի եկամուտները:

Հարկ է նշել, որ 5-րդ և 6-րդ դեցիլային խմբերի դրամական եկամուտները կրկնակի և նույնիսկ եռակի գերազանցում են 1–2 դեցիլային խմբերի դրամական եկամուտների մակարդակը: Առաջին երկու դեցիլներում հայտնված տնային տնտեսությունները քիչ հավանականություն ունեն հայտնվելու եկամուտների միջին խմբում: Այսինքն՝ տնային տնտեսությունների շարժունակությունն ըստ եկամուտների տարբեր խմբերի բավականին ցածր է: Այլ կերպ ասած՝ դրամական եկամուտների ստորին մակարդակում գտնվող 20 տոկոսն առավել քիչ հավանականություն ունի փոխելու իր եկամտային խումբը:



Գծապատկեր 9. ***Անվանական դրամական եկամուտները տնային տնտեսության մեկ շնչի հաշվով՝ ըստ դեցիլային խմբերի, միջին ամսական, 2006–2022 թթ.***[24]

Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ առաջին վեց դեցիլային խմբերի, այսինքն՝ բնակչության շուրջ 60 տոկոսի միջին ամսական եկամուտների մակարդակը ցածր է նվազագույն ամսական աշխատավարձի մեծությունից:

Պատկերն առավել ակնառու է տնային տնտեսությունների դրամական եկամուտների «բևեռային» դեցիլների հարաբերության գործակիցը դիտարկելիս: Խնդրահարույց է, որ 2022 թվականին առավել ապահովված բնակչության 10 տոկոսի դրամական եկամուտները 13,2 (2021 թ.՝ 14,3) անգամ ավելի են անապահով մասի եկամուտներից (բնակչության ստորին 10 տոկոսը):

[24] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2006–2021 թթ., https://armstat.am/am/?nid=82&id=871



Գծապատկեր 10. ***10% ամենաապահով և 10% ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը 2004–2022 թթ.***[25]

Ըստ գծապատկեր 10-ի՝ 10 տոկոս ամենաապահով և 10 տոկոս ամենաանապահով բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը վերջին 18 տարում գրեթե կայուն կերպով պահպանվել է, նկատելի տեղաշարժեր չեն արձանագրվել անհավասարության կրճատման ուղղությամբ: Այսինքն՝ սպառողական ծախսերի ու եկամուտների աճը նշանակալիորեն չի մեղմել բնակչության բևեռացվածությունը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ աղքատ բնակչության մեջ անհամեմատ մեծ է 15–75 տարեկան զբաղվածների տեսակարար կշիռը՝ 56,8 տոկոս (ընդ որում, աղքատների մոտ մեկ երրորդը վարձու աշխատողներ են), այսինքն՝ 15–75 տարեկան աղքատ բնակչության մեջ յուրաքանչյուր երկրորդն աշխատում է (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Աշխատուժի մասնակցությունն ու աղքատությունը (15–75 տարեկան բնակչություն), 2022 թ.[26]

Աշխատուժի մասնակցությունը	*Ծայրահեղ աղքատ*	*Աղքատ*	*%-ով՝ 15–75 տարեկան աղքատների մեջ*	*%-ով՝ 15–75 տարեկան բնակչության մեջ*
Տնտեսապես ակտիվ	1,0	22,5	63,8	66,3
Զբաղվածներ	0,9	21,7	56,8	61,0
Վարձու աշխատողներ	0,7	20,0	32,4	37,7
Ինքնազբաղվածներ	1,2	23,4	20,7	20,7
Այլ զբաղվածներ	1,3	33,2	3,7	2,6
Գործազուրկներ	1,9	30,9	7,0	5,3
Տնտեսապես ոչ ակտիվ	1,2	25,1	36,2	33,7
Կենսաթոշակառուներ	0,5	21,9	9,3	9,9
Ուսանողներ	2,2	28,2	7,6	6,3
Այլ տնտեսապես ոչ ակտիվ	1,2	25,7	19,3	17,5

[25] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստան, տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը և հիմնական սննդամթերքի սպառումը, https://armstat.am/file/article/poverty_2010a_4.pdf, https://armstat.am/file/article/poverty_2019_a_3.pdf , https://armstat.am/file/article/poverty_2022_a_3.pdf

[26] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019–2022 թթ., էջ 39, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf

Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալների (International Labour Organization)՝ Հայաստանի աշխատանքային աղքատության մակարդակը 2022 թ. կազմել է 32%[27]: Համեմատության համար նշենք, որ հարևան Վրաստանում աշխատանքային աղքատության մակարդակը 23% է, Իրանում՝ 8%: Գծապատկեր 11-ից երևում է, որ Հայաստանի աշխատանքային աղքատության մակարդակը անհամեմատ բարձր է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համեմատությամբ[28]:



Գծապատկեր 11. ***Աշխատանքային աղքատության մակարդակն ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության (օրական 3,2–5,5 ԱՄՆ դոլար), 2022 թ.[29]***

Աղքատների նշանակալի մասը, զբաղված լինելով հանդերձ, չի կարողանում հոգալ սեփական նյութական և ոչ նյութական կարիքները: Կան ոլորտներ, որտեղ նույնիսկ զբաղված լինելու հանգամանքը աղքատությունից խուսափելու գրավական չի հանդիսանում: Այսպես՝ 2022 թ. հունվար-սեպտեմբերին կրթության ոլորտում աշխատավարձի միջին մեծությունը կազմել է շուրջ 142,3 հազ. դրամ, իսկ մշակույթի և արվեստի ոլորտում՝ 143,2 հազ. դրամ, ինչը աղքատության մեջ հայտնվելու ռիսկեր է առաջացնում[30]: Այսինքն՝ մեկ կամ երկու երեխաներից և երկու չափահաս անդամներից բաղկացած տնային տնտեսությունները, որոնցից մեկը զբաղված է կրթության, իսկ մյուսը՝ գյուղատնտեսության ոլորտում, «հավակնում են» համալրելու աղքատների շարքերը:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեից հայցված տվյալների՝ զբաղված աղքատների միջին անվանական աշխատավարձը կազմում է 67478 դրամ:

---

[27] Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության (International Labour Organization) տվյալների՝ աղքատության գիծը բնակչության մեկ շնչի հաշվով օրական 3,2–5,5 ԱՄՆ դոլար է, չափավոր աղքատների դեպքում՝ օրական 1,9–3,2 ԱՄՆ դոլար, իսկ ծայրահեղ աղքատներինը՝ օրական 1,9 ԱՄՆ դոլարից ցածր:

[28] Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության կայքէջ, https://ilostat.ilo.org/topics/working-poverty/

[29] Տե՛ս նույն տեղը: Հարկ է նշել, որ Ռուսաստանի ցուցանիշները վերաբերում են 2021 թվականին:

[30] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-հոկտեմբերին, էջ 95, https://armstat.am/file/article/sv_10_23a_142.pdf

Աղքատության մակարդակը նշանակալիորեն փոփոխվում է՝ կախված զբաղված բնակչության կրթական մակարդակից: Ոլորտին առնչվող գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթության առկայության պարագայում փոքրանում է աղքատ կամ զբաղված աղքատ լինելու հավանականությունը[31]: Այս տրամաբանությունը գործում է նաև հայաստանյան իրականության պայմաններում: Բարձրագույն կրթական մակարդակ ունեցողների աղքատության մակարդակը ամենացածրն է՝ ընդամենը 14,9 տոկոս, մինչդեռ տարրական և ցածր կրթական մակարդակ ունեցողների դեպքում 35,1 տոկոս է[32]:

Ինչ վերաբերում է զբաղված աղքատներին, ապա գծապատկեր 12-ից ևս կարելի է նկատել, որ աղքատության մակարդակն ամենացածրն է հետբուհական և բարձրագույն կրթությամբ զբաղվածների շրջանակներում: Հետբուհական և բարձրագույն կրթություն ունեցող զբաղված բնակչության մեջ ընդամենը 5,2 և 11,9 տոկոսն են համարվում աղքատ:



Գծապատկեր 12. ***Զբաղված բնակչության աղքատությունն ու զբաղված աղքատ բնակչության միջին ամսական աշխատավարձն ըստ կրթության մակարդակի (15–75 տարիքի բնակչություն), 2021 թ.***[33]

---

[31] Տե՛ս **Gundlach Erich, Navarro de Pablo José, Weisert Natascha,** Education is good for the poor: a note on Dollar and Kraay, էջ 1-6, https://www.econstor.eu/bitstream/10419/3199/1/gundlach_education.pdf

[32] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019–2022 թթ., էջ 41, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf

[33] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեից հայցված տվյալների:

Տնտեսագիտական փորձառական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երեխաների կրթական մակարդակի և եկամուտների վրա վճռորոշ ազդեցություն ունի ծնողների կրթական մակարդակը[34]:

Բարձրագույն կրթությամբ ծնողների դեպքում երեխաները առավել մեծ հավանականություն ունեն բարձրագույն կրթություն ստանալու, քան ցածր և միջին կրթական մակարդակ ունեցող ծնողների պարագայում:



Գծապատկեր 13. ***Տնային տնտեսության գլխավորի 18 տարեկանից բարձր որդու/դստեր կրթական ընթացիկ մակարդակն ըստ ծնողների կրթական մակարդակի, %***[35]

Այսպես՝ բարձրագույն կրթությամբ երկու ծնողների երեխաների շուրջ 82 տոկոսը, իսկ բարձրագույն կրթությամբ մեկ ծնողի դեպքում երեխաների շուրջ 67 տոկոսն ունեն բարձրագույն կրթություն: Մինչդեռ, բարձրագույն կրթություն չունեցող ծնողների երեխաների ընդամենը 26,3 տոկոսն է ստացել բարձրագույն կրթություն (գծապատկեր 13):

Մյուս կողմից էլ՝ բարձրագույն կրթություն ստանալը կապված է ֆինանսական հնարավորությունների հետ: Այսպես՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ճնշող մեծամասնությունը ոչ աղքատ տնային տնտեսություններից է:

Պատկերն առավել ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրվում են կրթական ծախսերն ըստ քվինտիլային խմբերի: Այսպես՝ տնային տնտեսությունների առավել խոցելի 1-ին և 2-րդ քվինտիլների կրթական ամսական ծախսերը անհամեմատ ցածր են և չեն գերազանցում 350 դրամը, իսկ տնային տնտեսությունների ամենաապահով խումբը (վերին 20%) կրթության վրա ծախսում է 9 անգամ ավելի շատ, քան 1-ին խմբին պատկանող տնային տնտեսությունները (գծապատկեր 14):

---

[34] Տե՛ս The Global Social Mobility Report 2020, Equality, Opportunity and a New Economic Imperative, World Economic Forum, January 2020, էջ 9-18, https://www3.weforum.org/docs/Global_Social_Mobility_Report.pdf, Understanding social mobility, OECD, https://www.oecd.org/stories/social-mobility/

[35] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեից հայցված տվյալների:

Պայմանականորեն՝ բարեկեցիկ տնային տնտեսությունները կրթության ոլորտում ծառայությունների ձեռքբերման համար որակապես ավելի շատ ծախսեր են կատարում, քան համեմատաբար թույլ ֆինանսական հնարավորություններ ունեցողները, ինչը չի կարող իր արտացոլումը չգտնել կրթական համապատասխան մակարդակներում:



Գծապատկեր 14. ***Կրթության վրա տնային տնտեսությունների կատարած ծախսերն ըստ քվինտիլային խմբերի, 2021 թ.***[36]

Դա առավել ակնհայտորեն դրսևորվում է բուհական համակարգում. աղքատ տնային տնտեսությունները ներկայացնող երիտասարդների ընդգրկվածությունը բարձրագույն կրթական հաստատություններում շատ ավելի ցածր է, քան ոչ աղքատ տնային տնտեսությունների դեպքում: Ավելին, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները բուհերում գրեթե չունեն ուսանողներ:

Տնային տնտեսությունները, որոնք ուսանող ունեին, 2022 թ. տվյալներով բուհի վարձավճարի և մասնավոր ծախսերի համար միջինում վճարել են համապատասխանաբար՝ 34 736 դրամ և 23 295 դրամ: Այս առումով, բուհի վարձավճարի համար 34 736 դրամն անհասանելի է 1–2 քվինտիլներին, որոնց սպառողական ծախսերի մեծությունն անգամ ցածր է 34 000 դրամից: Գործնականում, բարձրագույն կրթություն ստանալու նպատակով կատարվող ծախսերի նման մեծությունը անհասանելի է նաև 1–4 քվինտիլների համար, որոնց առավելագույն սպառողական ծախսերի մեծությունը չի գերազանցում 60000 դրամը:

Այս համատեքստում տեղին է անդրադառնալ նաև բազմաչափ աղքատության գնահատականներին, որոնք աղքատությունը դիտարկում են զրկանքների տեսանկյունից: Բազմաչափ աղքատության մակարդակը 2022 թ. կազմել է 20,7 տոկոս, ինչը 2 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա բազմաչափ աղքատության մակարդակը՝ 18,7 տոկոս:

Բազմաչափ աղքատության հինգ չափումներից մեկը վերաբերում է ***կրթությանը:*** Աղյուսակ 3-ից երևում է, որ կրթության չափումի բոլոր բաղադրիչներով, բացառությամբ կրթական հաստատությունների հասանելիության, զրկանք կրող բնակչության տեսակարար կշիռը, նախորդ տարվա համեմատությամբ, աճել է:

[36] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեից հայցված տվյալների:

Աղյուսակ 3

Հրկանք կրող բնակչության տեսակարար կշիռն ըստ կրթության, առողջապահության և աշխատանքի չափումների ցուցանիշների, 2020–2022 թթ.[37]

Հրկանք	2020	2021	2022
Չափում. կրթություն			
Միջնակարգ կրթության բացակայություն	3,9%	3,0%	4,6%
Դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածություն	3,1%	2,6%	3.1%
Կրթական հաստատությունների հասանելիություն	3,0%	5,8%	2.8%
Կրթական ծառայությունների որակ	4,7%	1,7%	2.5%
Չափում. աշխատանք			
Աշխատաշուկային մասնակցություն	19,0%	20,5%	26,0%
Երկարաժամկետ զբաղվածություն	5,2%	4,3%	3.7%
Արժանավայել աշխատատեղեր	40,7%	39,9%	43.2%
Թերզբաղվածություն	36,2%	35,0%	39.2%
Չափում. առողջապահություն			
Բնականոն գործունեության դադարեցում	34,1%	37,5%	37.5%
Առողջապահական ծառայությունների մատչելիություն	7,9%	5.0%	7.2%
Առողջապահական հաստատությունների հասանելիություն	10,8%	12,7%	8.7%
Առողջապահական ծառայությունների որակ	7,7%	6,9%	7.8%

Բազմաչափ աղքատության մյուս կարևորագույն բաղադրիչը ***առողջապահությունն է:*** Ըստ 2021 թ. ՏՏԿԱՀ ստացված տվյալների՝ բժշկական ծառայությունների դիմաց կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների սպառողական ծախսերի ընդամենը 5.6%-ը կամ միջինում 2966 դրամ[38]:

Առողջապահության ծախսերն ըստ սպառման քվինտիլային խմբերի խիստ անհավասարաչափ են բաշխված:



Գծապատկեր 15. ***Առողջապահության ծառայությունների վրա տնային տնտեսությունների կատարած ծախսերն ըստ քվինտիլային խմբերի, 2021 թ.***[39]

[37] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019-2022 թթ., էջ 55-56, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf, Աղքատության պատկերը Հայաստանում 2010–2021 թթ., էջ 56, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf

[38] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2019-2022 թթ., էջ 83, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf

[39] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեից հայցված տվյալների:

Գծապատկեր 15-ից երևում է, որ 1–4 քվինտիլային խմբերում ներառված տնային տնտեսությունների 80 տոկոսի առողջապահության ծախսերի մասնաբաժինը չի գերազանցում ընդհանուր 6 տոկոսը, մինչդեռ բնակչության առավել ապահովված խումբը (վերին 20%) կարողանում է առողջապահական ծախսեր կատարել սպառման 12,9 տոկոսի չափով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ առավել ապահովված 5-րդ քվինտիլը առողջապահական ծախսերին հատկացնում է շուրջ 4 անգամ ավելի շատ, քան 4-րդ խումբը և շուրջ 15 անգամ ավելի շատ, քան առաջին քվինտիլը:

Բազմաչափ աղքատության տեսանկյունից կարևոր է դիտարկել նաև, թե Հայաստանի բնակիչները որքանով հնարավորություն ունեն մասնակցելու աշխատաշուկային: Համաձայն այդ գնահատումների՝ աշխատաշուկային մասնակցության հնարավորությունից (ընտանիքի աշխատունակ տարիքի անդամների կեսից ավելին աշխատաշուկային չի մասնակցում) զրկված է բնակչության 26 տոկոսը, թերզբաղված կամ սեզոնային (պատահական) աշխատանքով է զբաղված 39.2 տոկոսը, իսկ բնակչության 43.2 տոկոս կազմող՝ ինքնազբաղվածի կարգավիճակով աշխատողին հասանելի չեն արժանավայել աշխատատեղեր[40]: Այս առումով, աշխատաշուկային մասնակցելու հասանելիության և պատշաճ աշխատատեղերով ապահովումը կարելի է համարել աշխատանքային ռեսուրսների ներուժի օգտագործման հաշվին աղքատության կրճատման լավագույն միջոց:

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության տվյալների հիման վրա իրականացրել ենք նաև աղքատության վրա ազդող գործոնների գնահատում: Գնահատումը կատարվել է բինար լոջիթ մոդելով, որտեղ որպես կախյալ փոփոխական է դիտարկվել աղքատության կարգավիճակի pov փոփոխականը, որն ընդունում է 0 արժեքը աղքատ և 1 արժեքը ոչ աղքատ տնային տնտեսությունների դեպքում: Մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքներից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով ՏՏԿԱՀ տվյալների առկայությունը՝ որպես անկախ փոփոխականներ դիտարկել ենք հետևյալ ցուցանիշները.

- *տնային տնտեսության գլխավորի կրթական մակարդակը.* փոփոխականն ընդունում է 1–7 արժեքները, որտեղ՝ 1-ը տարրական կրթական մակարդակն է, 6-ը՝ բարձրագույն, 7-ը՝ հետբուհական,
- *բնակավայրի տեսակը.* փոփոխականն ընդունում է 1 արժեքը քաղաքային և 2 արժեքը գյուղական բնակավայրերի դեպքում,
- տնային տնտեսության անդամների թիվը,
- տնային տնտեսության գլխավորի տարիքը,
- տնային տնտեսությունների դրամական և ոչ դրամական եկամուտները,
- *տնային տնտեսության բնակարանային պայմանները.* փոփոխականն ընդունում է 1՝ շատ լավ, 2՝ լավ, 3՝ բավարար, 4՝ վատ, 5՝ շատ վատ բնակարանային պայմանների դեպքում:

Լոջիթի արդյունքները փաստում են, որ մոդելում գնահատված բոլոր գործակիցները վիճակագրորեն նշանակալի են նշանակալիության 1% մա-

[40] Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Աղքատության պատկերը Հայաստանում 2010–2021 թթ., էջ 53, 56, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf

կարդակում: Ստացված արդյունքների համաձայն՝ տնային տնտեսության գլխավորի կրթական մակարդակի ավելացման յուրաքանչյուր աստիճանը 1,225 անգամ մեծացնում է ոչ աղքատ լինելու հավանականությունը: Մինչդեռ, քաղաքայինից գյուղական բնակավայր տեղափոխվելը, ինչպես նաև ընտանիքի անդամների համալրումը, տնային տնտեսության գլխավորի տարիքի աճը, բնակարանային վատ պայմանները նվազեցնում են ոչ աղքատ լինելու հավանականությունը (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Լոգիստիկ ռեգրեսիայի արդյունքները[41]

Անկախ փոփոխականներ	B	Sig.	Exp(B)
Տնային տնտեսությունների անդամների թիվը	-0.791	0.000	0.454
Բնակության վայրը	-0.311	0.000	0.732
Տնային տնտեսությունների գլխավորի կրթական մակարդակը	0.203	0.000	1.225
Տնային տնտեսությունների գլխավորի տարիքը	-0.002	0.000	0.998
Բնակարանային պայմանները	-0.099	0.000	0.905
Դրամական եկամուտներ	0.000	0.000	1.000
Ոչ դրամական եկամուտներ	0.000	0.000	1.000

Լոգիստիկ ռեգրեսիայի արդյունքում ստացված Նագելկերկեի R^2-ը, որը R^2-ի համարժեքն է բինար լոջիթում, 40,9% է, այսինքն՝ կախյալ փոփոխականների տատանումների շուրջ 41 տոկոսը բացատրվում է վերոնշյալ անկախ փոփոխականներով: Լոգիստիկ մոդելի կանխատեսման ճշգրտությունը 80,2% է:

Եզրակացություն: Այսպիսով՝ Հայաստանում ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական աղքատության պատկերը չափազանց մտահոգիչ է: Սոցիալական լարվածությունը չի թուլացել առավելապես գյուղական բնակավայրերում:

Աղքատության տեսանկյունից առավել խոցելի են բազմանդամ և, հատկապես, երեք և ավելի (մինչև 6 տարեկան) երեխա ունեցող ընտանիքները (50.4%):

Խնդրահարույց է հատկապես զբաղված աղքատների բավականին մեծ տեսակարար կշիռը (15–75 տարեկան աղքատների մեջ՝ 56,8%): Դա վկայում է, որ առանձին ոլորտներում (օրինակ՝ կրթություն, մշակույթ, գյուղատնտեսություն) նույնիսկ զբաղված լինելու հանգամանքը հնարավորություն չի տալիս խուսափելու աղքատությունից:

Սպառողական ծախսերի և դրամական եկամուտների անհավասարությունը բնակչության տարբեր խմբերի միջև խորանում է: Խնդրահարույց է հատկապես այն հանգամանքը, որ առաջին երեք քվինտիլային խմբերի սպառողական ծախսերի մակարդակը աղքատության միջին գծից ներքև է գտնվում, իսկ առաջին վեց դեցիլային խմբերի միջին ամսական եկամուտների մակարդակը ցածր է նվազագույն ամսական աշխատավարձի մեծությունից:

[41] Հաշվարկել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության 2021 թ. տվյալների հիման վրա:

Անհավասարաչափ են բաշխված հատկապես առողջապահական և կրթական ծախսերը: Այսպես՝ առավել ապահովված 5-րդ քվինտիլը առողջապահական ծախսերին հատկացնում է շուրջ 15 անգամ ավելի շատ, քան առաջին քվինտիլը: Տնային տնտեսությունների ամենաապահով խումբը (վերին 20%) կրթություն ստանալու նպատակով ծախսում է 9 անգամ ավելի, քան 1-ին խմբին պատկանող տնային տնտեսությունները:

Ընդհանուր առմամբ, աղքատության հաղթահարման տեսանկյունից՝ խոչընդոտող առաջնային գործոններն են աշխատաշուկայի մասնակցությունը, արժանավայել աշխատատեղերի ապահովումը, կրթական և առողջապահական հաստատությունների հասանելիությունը: Այս առումով լրջագույն ջանքեր պետք է գործադրվեն ոչ միայն պարենի մատչելիության, այլ նաև կրթական, աշխատաշուկայի մասնակցության հնարավորության ապահովման ուղղություններում, որոնք առաջադեմ հասարակության կարևորագույն նախապայմաններն են:

Սույն հոդվածում կլաստերային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ իրականացվել է երկրների խմբավորում ըստ աղքատության մակարդակի, խորության, Ջինիի գործակցի, առողջապահական, կրթական ծախսերի, տնտեսական աճի ցուցանիշների: Վերլուծության արդյունքների հիման վրա առանձնացվել են լավագույն, միջին, վատագույն, միջինից բարձր և ցածր արդյունք արձանագրած երկրների խմբերը: Այսպես՝ լավագույն կլաստերում գերակշռում են աղքատության կրճատման առավել նպատակային քաղաքականություն իրականացրած և համեմատաբար բարձր արդյունքներ արձանագրած երկրները, որոնց բնութագրիչները կարող են դիտարկվել որպես թիրախային՝ մյուս կլաստերներում ընդգրկված երկրների համար: Այս կլաստերին առավել մոտ են միջինից բարձր արդյունք արձանագրած երկրները, որոնք, չնայած առողջապահական և կրթական ծախսերի բարձր մակարդակին, զիջում են լավագույն կլաստերի երկրներին աղքատության և անհավասարության գնահատականներով:

Նույն տրամաբանությամբ՝ միջին և միջինից ցածր արդյունք արձանագրած երկրների խմբում հանգրվանել են աղքատության հաղթահարմանն ուղղված՝ ակտիվ քաղաքականություն նախաձեռնած, սակայն դեռևս ոչ գոհացուցիչ արդյունքներ արձանագրած երկրները: Մինչդեռ, վատագույն կլաստերում ընդգրկվել են աղքատության անհամեմատ բարձր մակարդակ ունեցող երկրները, որտեղ քաղաքականության վերանայման անհրաժեշտություն կա: Այս առումով, բացասական է այն հանգամանքը, որ ԵԱՏՄ երկրներից Հայաստանը, Ղրղզստանը և Բելառուսը հայտնվել են վատագույն արդյունք արձանագրած երկրների խմբում:

Երկրների դասակարգման վերոնշյալ մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտելու երկրների քաղաքականությունների ընդհանրությունները՝ տնտեսական աճի, աղքատության և անհավասարության ցուցանիշների, կրթական և առողջապահական ծախսերի համատեքստում: Դա որոշիչ դերակատարություն ունի թիրախային բնութագրիչների սահմանման, շեղումների բացահայտման և քաղաքականության ուղենիշների վերանայման տեսանկյունից:

ՀՀ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության տվյալների հիման վրա իրականացրել ենք լոգիստիկ ռեգրե-

սիոն վերլուծություն, որի արդյունքները վկայում են, որ տնային տնտեսության գլխավորի կրթական մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ավելացումը 1,225 անգամ մեծացնում է ոչ աղքատ լինելու հավանականությունը, մինչդեռ դա նվազում է՝ տնային տնտեսության անդամների թվաքանակի աճից, բնակավայրից (գյուղական), տնային տնտեսության գլխավորի տարիքի աճից, բնակարանային պայմաններից կախված:

Այսպիսով՝ ստացված արդյունքներն ուրվագծում են այն հետնախորշերը, որոնցում առավել մեծ ջանքեր պետք է գործադրվեն աղքատության դեմ պայքարում: Գործնական առումով դրանք առանքային նշանակություն ունեն աղքատության կրճատման քաղաքականության վերանայման, շրջադարձային կետերի բացահայտման և առաջնահերթությունների հստակեցման տեսանկյունից:

Օգտագործված գրականություն

1. Աղքատության պատկերը Հայաստանում 2008–2018 թթ., ՀՀ ՎԿ կայքէջ, https://armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf
2. Աղքատության պատկերը Հայաստանում 2010–2021 թթ., ՀՀ ՎԿ կայքէջ, https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf
3. Աղքատության պատկերը Հայաստանում 2019–2022 թթ., ՀՀ ՎԿ կայքէջ, https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf
4. Աշխատանքի միջազգային կազմակերպության (International Labour Organization) կայքէջ, https://ilostat.ilo.org/topics/working-poverty/
5. Թադևոսյան Ջ., Նոր աղքատնե՞ր 21-րդ դարում. ի՞նչ է սպասվում, https://regst.wordpress.com/2022/03/31/inch_e_spasvum/
6. Խաչատրյան Ա., Դատապարտված աղքատության, «Ամբերդ» տեղեկագիր, 2023/3, DOI: 10.52174/2579-2989_2023.3-25
7. Խառատյան Ա., Գալստյան Ա., Եկամուտների անհավասարության և աղքատության արդի միտումները, «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն» N3, 2022, https://doi.org/10.46991/BYSU:G/2022.13.3.076
8. Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/SI.POV.UMIC
9. Հայաստան, տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը և հիմնական սննդամթերքի սպառումը, ՀՀ ՎԿ կայքէջ, https://armstat.am/file/article/poverty_2010a_4.pdf, https://armstat.am/file/article/poverty_2019_a_3.pdf, https://armstat.am/file/article/poverty_2022_a_3.pdf, https://armstat.am/file/article/poverty_2023_a_3.pdf
10. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-հոկտեմբերին, https://armstat.am/file/article/sv_10_23a_142.pdf
11. Հարությունյան Կ., Բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածության առանձնահատկությունները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն» 2022, N 2, https://doi.org/10.46991/BYSU:G/2022.13.2.003

12. ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__25%20Households/PS-hh-1-2021.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb
13. Մարգարյան Ս., Տնտեսական և սոցիալական զարգացման փոխազդեցության հիմնախնդիրները, https://arar.sci.am/dlibra/publication/295262/edition/270967/content
14. Պարենային ապահովություն և աղքատություն, 2006–2021 թթ., ՀՀ ՎԿ կայքէջ, https://armstat.am/am/?nid=82&id=871
15. Քթոյան Ա., Աղքատության ոչ նյութական հարթությունը, 2020, https://asue.am/upload/files/amberd/2020.2.pdf
16. Крыштановский А.О., Анализ Социологических данных с помощью пакета SPSS, Учебники Высшей школы экономики, М., 2006.
17. Орлова И.В. и др., Многомерный статистический анализ в экономических задачах: Компьютерное моделирование в SPSS, Учебное пособие, М., 2009.
18. Amartya Sen and the thousand faces of poverty, July 01, 2001, https://www.iadb.org/en/news/amartya-sen-and-thousand-faces-poverty#:~:text=According%20to%20Sen%2C%20being%20poor,social%20requirements%20of%20the%20environment
19. Anand S., Ravallion M., Human Development In Poor Countries: On the Role of Private Incomes and Public Services, Journal of Economics Perspectives, Volume 7, 1993, https://pubs.aeaweb.org/doi/pdfplus/10.1257/jep.7.1.133
20. Deaton A., Prize Lecture: Measuring and Understanding Behavior, Welfare, and Poverty, 2015, https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/2015/deaton-lecture.html
21. Dollar D., Kleinberg T., Kray A., Growth Still is Good for the Poor, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2309849
22. Gundlach, Erich; Navarro de Pablo, José; Weisert, Natascha, Education is good for the poor: a note on Dollar and Kraay, https://www.econstor.eu/bitstream/10419/3199/1/gundlach_education.pdf
23. Poverty and Inequality Platform, World Bank, https://pip.worldbank.org/country-profiles/ARM
24. Ravallion M., Inequality is bad for the Poor, World Bank Policy Research Working Paper 3677, August 2005, https://deliverypdf.ssrn.com/delivery.php?ID=681105073027022001030081096118098029122047004088035085027091099031068115102116114077126045101012021097047088072096116126116013078004085038068092067023008102096027085042027076022124004102114001072115107067029086101086070065100007094100089068111086&EXT=pdf&INDEX=TRUE
25. The Global Social Mobility Report 2020, Equality, Opportunity and a New Economic Imperative, World Economic Forum, January 2020, https://www3.weforum.org/docs/Global_Social_Mobility_Report.pdf
26. Understanding social mobility, OECD, https://www.oecd.org/stories/social-mobility/
27. World Bank, Making Services work for poor people, World Development Report 2004, https://openknowledge.worldbank.org/entities/publication/c7755269-fa9d-5a07-9471-4ea35492b1d9

АНИ ХАЧАТРЯН
Старший научный сотрудник исследовательского центра «Амберд» АГЭУ, кандидат экономических наук

Материальные и нематериальные аспекты бедности в Республике Армения. – В современных условиях развития мировой экономики разработка жизнеспособной политики преодоления бедности и ее последовательная реализация имеет важное значение в повестке дня развивающихся и развитых экономик. Это требует количественной оценки результатов, которая играет решающую роль в выявлении возможностей углубления политики, направленной на преодоление бедности и сокращение неравенства, корректировке контрольных показателей эквивалентных реальности, и выявлении «отставаний».

В статье мы попытались провести аналогичный анализ с использованием инструментария кластерного анализа и провели классификацию стран с разным уровнем развития. Последнее дает возможность наблюдать результаты социально-экономической политики, реализуемой в разных странах, в контексте взаимосвязи показателей бедности, экономического роста, расходов на образование и здравоохранение. На основании полученных результатов были выделены группы стран с лучшими, худшими, средними, выше среднего и более низкими результатами.

На основе данных комплексного обследования условий жизни домохозяйств мы также провели логистический регрессионный анализ и оценили вероятность исключения бедности в зависимости от образовательного уровня главы домохозяйства, количества членов, места проживания и т. д. Результаты анализа имеют практическое значение в контексте пересмотра социальной политики, выявления «уязвимых точек» и корректировки приоритетов.

Ключевые слова: *уровень бедности, неравенство, квинтиль, работающие бедные, многомерная бедность*
JEL: D63, I32
DOI: 10.52174/29538114_2023.3-69

ANI KHACHATRYAN
Senior researcher at "Amberd" Research center, ASUE,
PhD in Economics

Material and Non-material Aspects of Poverty in the Republic of Armenia.– In the current conditions of the development of the world economy, the development of a viable policy for overcoming poverty and its consistent implementation is crucial in the countries with both developing and developed economies. It requires a quantitative evaluation of the results, which has a decisive role in highlighting the possibilities of deepening the policies aimed at overcoming poverty and reducing inequality, adjusting benchmarks equivalent to reality and identifying "gaps".

In this paper, we tried to perform a similar analysis using the tool of cluster analysis and carried out a classification of countries with different levels of development. The latter provides an opportunity to observe the results of the socio-economic policies implemented in different countries in the context of the relationship between poverty indicators, economic growth, education and healthcare expenditures. Based on the obtained results, the groups of countries with the best, worst, average, higher than average and lower results were distinguished.

Based on the data of Household's Integrated Living Conditions Survey, we have also implemented binar logit and estimated the probability of not experiencing poverty depending on the educational level of the head of the household, the number of members, the place of residence, etc. The results of the analysis are of practical importance in the context of revision of social policy, identification of "vulnerable points" and adjustment of priorities.

Keywords: *poverty rate, inequality, quintile, working poor, multidimensional poverty*
JEL: D63, I32
DOI: 10.52174/29538114_2023.3-69